# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<14>> հունվարի 2019թ. N29/02-2019

ք. Արմավիր

### *ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 15 տարածքային ընտրական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 34-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքապետարանում ընդունման հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

***Կարգադրում եմ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա.Ղուկասյանին)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Կ.Գրիգորյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

14.01.2019

X

VERIFIED OCSP 14.01.2019 17:28:01 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

**ՄԱՐԶՊԵՏ՝**
**Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**